ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Կոզիշսթի 1

№ 3884-Ա « 09 » հոկտեմբերի 2024թ.

ՀԱՍՐԱԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.2/11 ԵՎ 2/12 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Սերոբ Այվազյանի լ/ա Էդուարդ Այվազյանի դիմումը՝ Հասրաթյան փողոցի հ.2/11 և հ.2/12 հասցեներում գտնվող, սեփականության իրավունքով Սերոբ Այվազյանին պատկանող հողամասերի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.16022022-01-0254 և 16022022-01-0253 վկայականներ) սահմանները ճշտելու և հատակագծեր թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.16022022-01-0254 և 16022022-01-0253 վկայականները:

Հարցի ուսումնասիրությունից և տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Հասրաթյան փողոցի հ.2/11 և հ.2/12 հասցեների հողամասերի փաստացի մակերեսները համապատասխանաբար կազմում են 756.0քմ և 165.6քմ, որքան որ ամրագրված են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներում, սակայն առկա են տեղադիրքերի շեղումներ:

Քննարկվող՝ 756,0քմ և 165.6քմ մակերեսներով հողամասերը համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի՝ գտնվում են 7-րդ գոտում:

Երևան քաղաքի ավագանու 10.09.2024թ. հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ հողամասերը գտնվում են բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 135-րդ հոդվածով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ և հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Դ-65132-24, հ.Դ-76659-24, 03.06.2024թ, հ.Դ-120115-24 եզրակացությունները.

1. Սահմանել, որ սեփականության իրավունքով Սերոբ Այվազյանին պատկանող, Հասրաթյան փողոցի հ.2/11 և հ.2/12 հասցեներում գտնվող հողամասերի սահմանները որոշվում են համապատասխանաբար՝ 756,0քմ և 165.6քմ մակերեսների համար սահմանված կարգով հաստատված հատակագծերով:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ